ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ ԸՍՏ ԼՂՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ

Նարինե Սարգսյան
ԼՂՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժնի ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական

ԼՂՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված ընդհանուր կանոնի համաձայն՝ պարտավորության կատարումից միակողմանի հրաժարումը անթույլատրելի է: Յուրաքանչյուր պայմանագրի լուծում հնարավոր է կաԲմ կողմերի համաձայնությամբ, կա՛մ կողմերից մեկի պահանջով՝ դատարանի վճռով, միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում: Նվիրատվության պայմանագրի դեպքում, ընդհանուր կանոնից զատ, օրենքը թույլ է տվել կատարել բացառություն՝ սահմանելով նվիրատվության պայմանագիրը կատարելուց միակողմանի հրաժարվելու հնարավորությունը: Ըստ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 599-րդ հոդվածի՝ նվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապագայում նվիրառուին գույք կամ իրավունք փոխանցելու կամ նվիրառուին գույքային պարտականությունից ազատելու խոստում պարունակող պայմանագիրը կատարելուց, եթե այն կնքելուց հետո նվիրատուի գույքային կամ ընտանեկան դրությունը կամ առողջական վիճակն այնքան է վատթարացել, որ նոր պայմաններում պայմանագրի կատարումը կառաջացնի նրա կենսամակարդակի էական իջեցում, եթե նվիրառուն ոտնձգություն է կատարել նրա, նրա ընտանիքի անդամներից կամ մերձավոր ազգականներից որևէ մեկի կյանքի դեմ կամ նվիրատուին դիտավորյալ պատճառել է մարմնական վնասվածքներ: Հիշյալ հիմքերով նվիրատուի կողմից նվիրատվության պայմանագիրը կատարելուց հրաժարվելը նվիրառուին վնասների հատուցում պահանջելու իրավունք չի տալիս:

Նվիրատուն, նվիրատվության պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքից բացի, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավունք ունի վերացնել նվիրատվությունը, եթե նվիրառուն ոտնձգություն է կատարել նրա, նրա ընտանիքի անդամներից կամ մերձավոր ազգականներից որևէ մեկի կյանքի դեմ կամ նվիրատուին դիտավորյալ պատճառել է մարմնական վնասվածքներ: Եթե նվիրառուն կյանքից դիտավորյալ զրկում է նվիրատուին, ապա դատարանում նվիրատվությունը վերացնելու պահանջի իրավունքը պատկանում է նվիրատուի ժառանգներին:

Նվիրատվության պայմանագրում կարող է սահմանվել նվիրատվությունը վերացնելու՝ նվիրատուի իրավունքը, եթե նա նվիրառուից ավելի երկար ապրի: Նվիրատուի նման իրավունքը ծագում է միայն այն դեպքում, եթե նվիրատվության պայմանագիր կնքելիս կողմերը դա նախատեսել են: Ընդ որում, հիշյալ հիմքով նվիրատվության վերացումը ինքնին տեղի ունենալ չի կարող, քանի որ յուրաքանչյուր անձ իրեն պատկանող իրավունքները իրականացնում է իր հայեցողությամբ, ուստի նվիրատուն կարող է և՛ իրագործել, և՛ չիրագործել նվիրատվությունը վերացնելու իր իրավունքը: Չիրագործելու դեպքում նվերը փոխանցվում է նվիրառուի ժառանգ-

ներին, իսկ իրագործելու դեպքում նվիրատվության վերացումը տեղի կունենա ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 31-րդ՝ «Պայմանագիր փոփոխելը և լուծելը» գլխով նախատեսված նորմերով: Ընդ որում, նվիրատուի կողմից նվիրառուից ավելի երկար ապրելու դեպքում նվիրատվությունը վերացնելու իրավունքի իրագործումը կարող է տեղի ունենալ միայն այնպիսի դեպքերում, երբ նվիրատուի համար նվիրառուի անձը, բայց ոչ նրա ժառանգները, խիստ կարևոր է:

Հարկ է նշել, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսել է այն հնարավոր դեպքերը, որոնց պարագայում նվիրատվության պայմանագիրը կատարելուց հրաժարվելը և նվիրատվությունը վերացնելն անհնար են, այսինքն՝ նվիրատվության պայմանագիրը կատարելուց հրաժարվելու և նվիրատվությունը վերացնելու կանոնները չեն կիրառվում փոքրարժեք նվերների նկատմամբ: Ընդ որում՝ փոքրարժեք չափը ԼՂՀ քաղ. օր.-ում սահմանված չէ, մինչդեռ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 575-րդ հոդվածի համաձայն՝ սովորական են համարվում այն նվերները, որոնց արժեքը չի գերազանցում երեք հազար ռուբլին[1]:

Նվիրատվության պայմանագրով նվիրառուի հիմնական իրավունքը նվերը ստանալն է, ինչը բխում է նվիրատվության պայմանագրի առարկայից: Եթե նվիրատուն նվերի առարկան չի տալիս նվիրառուին, ապա վերջինս ունի նվերի առարկան պահանջելու իրավունք[2]:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 596-րդ հոդվածի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Նա այդ իրավունքը կարող է իրագործել ցանկացած պահի, և այն չպետք է պայմանավորված լինի որևէ հարգելի պատճառով: Ընդհանրապես նվիրառուն իրավունք ունի հրաժարվել նվերից առանց դրա դրդապատճառները նշելու: Այդ դեպքում նվիրատվության պայմանագիրը համարվում է լուծված: Նվերն ընդունելուց հրաժարվելը պետք է կատարվի նվիրատվության պայմանագրի համար սահմանված ձևով: Այն դեպքում, երբ նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը գրանցված է, նվերն ընդունելուց հրաժարվելը նույնպես ենթակա է պետական գրանցման: Նվիրատուն իրավունք ունի նվիրառուից պահանջել հատուցելու նվերն ընդունելուց հրաժարվելու հետևանքով իրեն պատճառված իրական վնասը: Այսինքն՝ հաշվի առնելով նվիրատվության պայմանագրի անհատույց լինելու բնույթը, օրենսդիրը, ընդհանուր դրույթներից բացի, նախատեսել է բացառություններ, որոնք սահմանափակում են պայմանագրի կողմերի պատասխանատվությունը: Այսպես. նվիրառուի կողմից նվերն ընդունելուց հրաժարվելու հետևանքով նվիրատուին պատճառված վնասների հատուցումը սահմանափակվում է միայն իրական վնասը հատուցելու պահանջով, ընդ որում՝ եթե նվիրատվության պայմանագիրը կնքվել էր նվիրատվության պայմանագրի համար սահմանված ձևով: Նվիրատվության կոնսենսուալ պայմանագրով նվիրառուն կրում է սահմանափակ պատասխանատվություն, նվերն ընդունելուց հրաժարվելու դեպքում նվիրատուին հատուցում է միայն պատճառված իրական վնասը, որը կարող է արտահայտվել նվերի փոխադրման, պահեստավորման և պահպանման հետ կապված ծախսերի տեսքով:

---

[1] Гражданский кодекс Российской Федерации (часть вторая) от 26 января 1996 г. № 14-ФЗ (ред. от 17 июля 2009 г.) // Собрание законодательства РФ. - 1996. - № 5. - Ст. 410

[2] Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս: Դասագիրք բուհերի համար: Երևանի համալս. հրատ., Եր., 2008, էջ 115:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 602-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում նվիրված գույքի թերությունների հետևանքով պատճառված վնասի համար: Այս հոդվածի համաձայն՝ վնասը, որը նվիրված գույքի թերությունների հետևանքով պատճառվել է նվիրառուի կյանքին, առողջությանը կամ գույքին, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ՝ «Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ» գլխի կանոններին համապատասխան, ենթակա է հատուցման նվիրատուի կողմից, եթե ապացուցվում է, որ այդ թերություններն առաջացել են մինչև գույքը նվիրառուին հանձնելը, չեն դասվում բացահայտների թվին, և նվիրատուն, իմանալով դրանց մասին, չի նախազգուշացրել նվիրառուին:

Նվիրառուի կյանքին և առողջությանը պատճառված վնասը կարող է արտահայտվել նրա մահվան, հաշմանդամության, առողջությանը տարբեր աստիճանի, այդ թվում նաև ծանր հետևանքներով մարմնական վնասվածքներ պատճառելու ձևով: Նվիրառուի գույքին վնաս պատճառելը կարող է դրսևորվել այն ոչնչացնելու, վնասելու կամ սպառողական հատկանիշները կորցնելու և այլ ձևով: Նվիրված գույքի թերությունների հետևանքով պատճառված վնասը կարող է տարբեր լինել: Այն կարող է վերաբերել կառուցվածքին, բաղադրությանը, հատկություններին և այլն:

Նվիրված գույքի թերությունների հետևանքով նվիրառուի կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասը նվիրատուի կողմից ենթակա է հատուցման ներքոհիշյալ հանգամանքների՝ իրենց համակցության մեջ ապացուցված լինելու դեպքում.

1. Թերություններն առաջացել են մինչև գույքը նվիրառուին հանձնելը: Ընդ որում թերությունների առաջացման պատճառը էական նշանակություն չունի, կարևորը դրանց առաջացման պահն է:

2.Թերությունները չեն դասվում բացահայտների թվին, այսինքն՝ այնպիսիները, որոնք հնարավոր կլիներ ի հայտ բերել ապրանքի արտաքին զննմամբ: Այդպիսի թերությունների մասին նվիրառուն չէր կարող իմանալ և, հետևաբար, չէր կարող կանխել կյանքին, առողջությանը կամ իր գույքին պատճառվող վնասը:

3. Նվիրատուն թեև գիտեր թերությունների առկայության մասին, սակայն նվիրառուին չի նախազգուշացրել դրանց մասին: Նվիրատուի հակահիրավական վարքագիծը դելիկտային պատասխանատվության անհրաժեշտ նախապայման է: Նվիրված գույքի թերությունների հետևանքով պատճառված վնասը կարող է դրսևորվել արտադրողի մեղքով, ինչի մասին նվիրատուն չգիտեր և չէր կարող իմանալ: Այդ դեպքում կիրառվում են «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ԼՂՀ օրենքի[1] դրույթները, եթե արտադրողի հանդեպ նվիրառուն հանդիսանում է սպառող: Օրինակ՝ քաղաքացի Ա-ն քաղաքացի Բ-ին նվիրում է բնակարան նորակառույց շենքում: Բնակարան տեղափոխվելուց որոշ ժամանակ անց բնակարանի պատշգամբը փլուզվում է: Այս իրավիճակում նվիրատուն չգիտեր և չէր կարող իմանալ նվերի թերությունների մասին, ինչը և ազատում է նրան վնասը հատուցելու պարտականությունից: Քաղաքացի Բ-ն, այս իրավահարաբերություններում հանդիսանալով որպես սպառող, պետք է դիմի դատարան ընդդեմ արտադրողի, այս դեպքում՝ շենքը կառուցողների:

[1] Տե՛ս Սպառողների իրավունքների պաշտպանության մասին թիվ ՀՕ-210 առ 12.06.2002թ. ԼՂՀ օրենք http://www.arlexis.am/

4. Նվիրատուի հակաիրավական անգործության և առաջացած վնասի միջև առկա է պատճառական կապ, որը դելիկտային պատասխանատվության ծագման պարտադիր պայմանն է:

Նվիրառուի առողջությանը կամ գույքին պատճառված վնասը հատուցվում է լրիվ ծավալով: ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1080-րդ հոդվածի համաձայն՝ վնասը հատուցվում է բնեղենով (տրամադրվում է նույն տեսակի և որակի գույք, վերանորոգվում է վնասված գույքը և այլն), կամ հատուցվում են պատճառված վնասները:

Նվիրատվության պայմանագրով պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվությունը սահմանվում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 26-րդ գլխի՝ «Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար» ընդհանուր հիմունքներով:

Նվիրատվության պայմանագիրը, որը քաղաքացիաիրավական պարտավորության և գործարքի տարատեսակ է, կարգավորվում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պարտավորություններին և գործարքներին վերաբերող ընդհանուր նորմերով: Հետևաբար կնքված նվիրատվության պայմանագիրը ընդհանուր մասում նախատեսված պարտավորական իրավունքի համապատասխան հիմքերով կարող է չկայանալ:

Նվիրատուի կողմից պարտավորության կատարումից հրաժարվելը կարող է պայմանավորված լինել գույքի ոչնչացման, այն շրջանառությունից հանվելու, խոստացած գործողությունների կատարումը արգելող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի հրապարակման ուժով: Հիշյալ պայմանները դադարեցնում են պարտավորությունը դրա կատարման անհնարինությամբ: Հետևաբար դրանք կարգավորվում են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 432-րդ և 433-րդ հոդվածներով նախատեսված նորմերով:

Նվիրատվությունը կարող է չկայանալ նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերում պայմանագիրը անվավեր (վիճահարույց կամ առոչինչ) ճանաչելու ընդհանուր հիմքերով: Նվիրատվության պայմանագիրը անվավեր է կամ կարող է այդպիսին ճանաչվել հետևյալ դեպքերում.

1) եթե չի համապատասխանում օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին,

2) եթե այն կնքվել է առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության՝ կեղծ գործարք,

3) եթե այն կնքվել է մեկ այլ գործարքի քողարկման նպատակով՝ շինծու գործարք,

4) եթե այն կնքվել է հոգեկան խանգարման հետևանքով անգործունակ ճանաչված քաղաքացու կողմից,

5) եթե նվիրատվության պայմանագրով որպես նվիրատու հանդես է եկել տասնչորս տարեկանը չլրացած անչափահասը,

6) եթե այն կնքվել է ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման հետևանքով դատարանի կողմից սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացու կողմից, առանց հոգաբարձուի համաձայնության,

7) եթե այն կնքվել է գործարքի կնքման պահին այնպիսի վիճակում գտնվող գործունակ քաղաքացու կողմից, ով ընդունակ չի եղել հասկանալու իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարելու դրանք,

8) եթե այն կնքվել է էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ,

9) եթե այն կնքվել է խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի՝ մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ:

Թվարկված բոլոր դեպքերում նվիրատվության պայմանագիրը համարվում է անվավեր իր էությամբ կամ էլ ճանաչվում է այդպիսին շահագրգիռ անձանց պահանջով: Անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների՝ բացառությամբ գործարքի անվավեր լինելու դեպքերի: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից: Գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ դա բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով: Նշված բոլոր դեպքերը կարգավորվում են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 303-317-րդ հոդվածներով նախատեսված՝ գործարքների անվավերությունը սահմանող նորմերով:

Իսկ նվիրատվություն խոստանալիս իրավահաջորդությանը վերաբերող հիմնահարցերը իրենց կարգավորումն են ստացել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 603-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված նորմերով, որոնք բացառապես վերաբերում են ապագայում նվեր հանձնելու խոստում պարունակող նվիրատվության պայմանագրին, այսինքն՝ նվիրատվության կոնսենսուալ պայմանագրին:

Հայտնի է, որ նվիրատվության ռեալ պայմանագրով պարտականությունների իրավահաջորդությունը անհնարին է, քանի որ այդպիսի պայմանագիրը կատարվում է դրա կնքմամբ: Նվիրատուն նվեր հանձնվող գույքի նկատմամբ կորցնում է սեփականության իրավունքը, երրորդ անձին է փոխանցում պահանջի իրավունքը, ներում է պարտքը կամ վճարում է նվիրառուի՝ երրորդ անձին ունեցած պարտքը, դրանով իսկ անմիջապես կատարում պայմանագրով նախատեսված իր պարտականությունները: Նվիրառուն իր հերթին նվիրատվության պայմանագրի առարկա հանդիսացող գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք երրորդ անձի նկատմամբ (պահանջի իրավունք), ազատվում է նվիրատուի կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից և դրանով իսկ անմիջապես ընդունում է պայմանագրի կատարումը:

Նվիրատվության կոնսենսուալ պայմանագրով՝ պայմանագրի կնքման և կատարման պահերը ժամանակի տևողությամբ տարանջատված են: Հնարավոր է, օրինակ, երբ պայմանագրի կատարման պահը վրա հասնելու ժամանակ դրա կողմերից մեկը (նվիրատուն կամ նվիրառուն) կենդանի չլինի: Համաձայն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 603-րդ հոդվածի 1-ին կետի՝ նվիրառուի, ում նվիրատվության պայմանագրով խոստացվել է նվեր, իրավունքները չեն փոխանցվում նրա ժառանգներին (իրավահաջորդներին), եթե այլ բան նախատեսված չէ նվիրատվության պայմանագրով: Սա պայմանավորված է նրանով, որ նվեր հանձնելու նվիրատուի մտադրությունը ձևավորվում է նվիրատուի և նվիրառուի միջև առկա միջանձնային հարաբերություններով: Այստեղ նվիրառուի անձը ունի էական նշանակություն: Նվիրատուն մտադիր է նվերը հանձնել ոչ թե որևէ մեկին, այլ կոնկրետ անձի: Այդ իսկ պատճառով մինչև նվիրատվության կոնսենսուալ պայմանագրի կատարման պահը նվիրառուի մահվան դեպքում նվիրատուն ազատվում է համապատասխան պարտականություններից, և պայմանագիրը համարվում է դադարած: Խոստումը, ո-

ը նվիրատուն տվել է նվիրառուին և չի կատարել, նրա ժառանգներին կատարման պահանջ ներկայացնելու իրավունք չի տալիս:

Քննարկված նորմը դիսպոզիտիվ է, քանի որ կոնկրետ պայմանագրով թույլատրելի է հարցի այլ լուծում: Այսպես, պայմանագրի կնքման ժամանակ կողմերը կարող են պայմանավորվել հակառակի մասին, մասնավորապես՝ նվիրառուի իրավունքները, ում խոստացվել է նվեր, նրա մահվան դեպքում փոխանցվում են նրա ժառանգներին: Հիշյալ պայմանը պետք է նախատեսված լինի նվիրատվության պայմանագրով: Տվյալ դեպքում նվիրառուի իրավունքի ժառանգումը իրականացվում է ժառանգման իրավունքի նորմերին համապատասխան:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 603-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դրույթը կիրառելի է նաև այն դեպքում, երբ որպես նվիրառու հանդես են գալիս իրավաբանական անձը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որոնք նվիրատվության կոնսենսուալ պայմանագրի կատարման պահին դադարեցրել են իրենց գործունեությունը:

Ի տարբերություն իրավահաջորդության հարաբերություններում նվիրառուի իրավունքների, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 603-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, նվիրատվություն խոստացած նվիրատուի պարտականությունները փոխանցվում են նրա ժառանգներին (իրավահաջորդներին), եթե այլ բան նախատեսված չէ նվիրատվության պայմանագրով:

Ժառանգության վերաբերյալ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ մտնում են ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող ոչ միայն գույքը և գույքային իրավունքը, այլև նրա պարտականությունները, որոնցից մեկը կարող է լինել նվիրատվության կոնսենսուալ պայմանագրի կատարումը: Նման դեպքում նվիրատուի պարտականությունները ընկնում են ժառանգատուի ժառանգների վրա, որոնք պարտավոր են կատարել համապատասխան պարտականություններ որպես ժառանգություն ստացած գույքի արժեքի սահմաններում: Նման պարտականությունների կատարման կարգը սահմանված է ժառանգական իրավունքի նորմերով: Հիշյալ նորմը կիրառելի է նաև այն դեպքում, երբ որպես նվիրատու հանդես է գալիս իրավաբանական անձը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, նրա սուբյեկտները կամ համայնքները: Նվիրատվություն խոստանալու պայմանագրի կնքման ժամանակ կողմերը կարող են պայմանավորվել, որ նվիրատվության կոնսենսուալ պայմանագրով նվիրատուի մահվան դեպքում նրա պարտականությունները դադարում են: Տվյալ դեպքում իրավահաջորդության կիրառումը անհնարին է:

Նվիրատվություն խոստանալիս իրավահաջորդությանը վերաբերող վերոհիշյալ նորմի շուրջ արված վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ քաղաքացիական օրենսգիրքը նվիրատվության խոստման պայմանագրով իրավահաջորդության հարցը թողել է կողմերի հայեցողությանը, այսինքն՝ այն կրում է դիսպոզիտիվ բնույթ: Ժառանգության և նվիրատվության վերաբերյալ նորմերի մրցակցությունից խուսափելու և ժառանգության նորմերից շրջանցելու հնարավորությունը բացառելու նկատառումներով, ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրքը իմպերատիվ ձևով արգելել է նվիրատուի մահից հետո նվիրառուին նվերի հանձնում նախատեսող նվիրատվության պայմանագրի կնքումը՝ նման պայմանագիրը համարելով առոչինչ: Նման տեսակի նվիրատվության նկատմամբ կիրառելի են ժառանգման մասին կանոնները:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածի 3-րդ կետով նվիրատուն իրավունք ունի դատական կարգով պահանջել վերադարձնելու նվիրատվությունը, եթե նվիրառուի վերաբերմունքը նրան նվիրված գույքի նկատմամբ, որը նվիրատուի համար ոչ գույքային մեծ արժեք է ներկայացնում, դրա անդառնալի կորստի սպառնալիք է ստեղծում: Նշված հիմքով նվիրատվության վերացման պահանջ կարող է ներկայացվել, եթե նվիրատվության պայմանագրի առարկա է հանդիսացել ինչ-որ գույք (բայց ոչ գույքային իրավունք կամ գույքային պարտավորությունից ազատում): Նվիրված գույքը նվիրատուի համար միանշանակ պետք է ունենա ոչ գույքային մեծ արժեք: Դա կարող է լինել, օրինակ, նվիրատուի կողմից տևական ժամանակով հավաքված հավաքածու, ընտանեկան մասունք և այլն: Օրինակ՝ տատը թոռնուհուն նվիրում է արծաթանախշ տոհմական հին գոտի, որը նա նվեր էր ստացել իր տատից, իսկ թոռնուհին կամենում է այդ գոտին պատշաճ գնով վաճառել:

Այսինքն՝ նվիրառուն պետք է ստացված նվերի նկատմամբ ցուցաբերի համապատասխան վերաբերմունք, հակառակ դեպքում՝ նվիրատուն կարող է վերացնել նվիրատվությունը, եթե որպես նվեր հանձնված գույքի նկատմամբ անհամապատասխան վերաբերմունքի դրսևորման հետևանքով իրենից մշակութային արժեք ներկայացնող գույքը կարող է ոչնչացվել կամ զգալիորեն վնասվել: Ընդ որում, նվիրատուն կարող է պահանջել դադարեցնելու նվիրատվության համաձայնության գործողությունը, եթե հայցի ներկայացման ժամանակ նվերը պահպանված է: Օրինակ, Արցախյան պատերազմի ժամանակ անհայտ կորած ազատամարտիկի նամակների և լուսանկարների մի մասը, որոնք վերջինիս կնոջ կողմից որպես նվեր հանձնվել էր Անհայտ կորած ազատամարտիկների միության թանգարանին, և թանգարանի աշխատակիցների կողմից ցուցադրանմուշների փոփոխման ժամանակ կորել են: Անհայտ կորած ազատամարտիկի կինը իրավունք ունի պահանջել վերացնելու նվիրատվությունը, քանի որ թանգարանի աշխատակիցները ցուցադրանմուշի պահպանման պարտականությունները ոչ պատշաճ են կատարել, որը նաև ամբողջ պահոցի կորստի սպառնալիք է ստեղծում:

Վերոնշյալ հիմքով նվիրատվությունը վերացնելը իրականացվում է դատական կարգով: Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նվիրատուի և նվիրառուի կողմից նվիրված գույքի նկատմամբ վերջինիս վերաբերմունքը կարող է տարբեր կերպ գնահատվել, ինչը կարող է և հանգեցնել վեճի առաջացման, ապա նվիրատուն պետք է ապացուցի որոշ հանգամանքներ: Նախ պետք է պարզել՝ արդյոք նվիրված գույքը նվիրատուի համար ոչ գույքային արժեք ունի, նվիրառուին հայտնի՞ էր, թե նվիրատվության պայմանագրի առարկան ինչ արժեք էր ներկայացնում նվիրատուի համար, ինչը պարտավորեցնում է նվիրառուին խնամքով վերաբերվել նվերին և ապահովել նրա ամբողջականությունը: Անհրաժեշտ է ապացուցել նաև, որ նման գույքի նկատմամբ նվիրառուի վերաբերմունքը իրականում դրա անդառնալի կորստի սպառնալիք է ստեղծում[1]:

«Թանգարանների և թանգարանային ֆոնդի մասին» ԼՂՀ օրենքի[2] 20-րդ հոդվածում սահմանված է, որ ԼՂՀ թանգարանային ֆոնդի ոչ պետական մասում ընդգրկված թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների ժառանգման, նվիրատվության, առք ու վաճառքի դեպքերում ժառանգորդը, գնոր-

[1] Տե՛ս http://www.bestreferat.ru/referat-151927.html

[2] Տե՛ս Թանգարանների և թանգարանային ֆոնդի մասին թիվ ՀՕ-50 առ 15.03.1999թ. ԼՂՀ օրենք http://www.arlexis.am/

դը պարտավոր են ստանձնել տվյալ թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների նախկին սեփականատիրոջ բոլոր պարտավորությունները: Իրավահաջորդի՝ այդ պարտավորություններից հրաժարվելու դեպքում պետությունն ունի դրանք գնելու առաջնային իրավունք:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության թանգարանային ֆոնդի ոչ պետական մասում թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների ընդգրկումը կատարվում է սեփականատիրոջ դիմումի հիման վրա:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված է, որ նվիրատվության վերացման դեպքում նվիրառուն պարտավոր է վերադարձնել նվիրատուի նվիրած գույքը, եթե այն բնեղենով պահպանվել է նվիրատվության վերացման պահին: Հոդվածի դիսպոզիցիայի բովանդակությունից հետևում է, որ նվիրատվության վերացումը առաջացնում է նվիրառուի կողմից բնեղենով պահպանված գույքը վերադարձնելու միակ հետևանքը:

Մեր դիտարկմամբ, հնարավոր են դեպքեր, երբ նվիրառուն գույքի օրինական սեփականատեր լինելու ժամանակ, մինչև նվիրատվության վերացման պահը նվիրատվության պայմանագրի առարկա հանդիսացող գույքը օտարի երրորդ անձի: Հարց է ծագում՝ նման հանգամանքներում ինչպես պետք է կարգավորվի նվիրառուի կողմից նվիրատուի նվիրած գույքը վերադարձնելու պահանջը, և իրականում դրա վերադարձը հնարավո՞ր է, թե՞ ոչ:

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Գ.Մասևիչը նվիրատվության վերացման վերաբերյալ կատարած մեկնաբանությունում նշում է, որ նվիրատվության վերացման դեպքում գույքը վերադարձվում է նվիրատուին այն նույն վիճակում, ինչպիսին եղել էր վերացման պահին: Նրա կարծիքով, նվիրառուի կողմից գույքից ստացած պտուղները, եկամուտները մնում են նրան: Ըստ նրա՝ եթե գույքը օտարվել էր երրորդ անձի, ապա դրա վերադարձը հնարավոր չէ: Նա միաժամանակ նշում է, որ եթե գույքը վերադարձնելուց խուսափելու նպատակով գույքի օտարման կամ ոչնչացման մեջ ապացուցվի նվիրառուի մեղքը, ապա հնարավոր է դառնում վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորության պահանջով հայցը: Եթե գույքը վերադարձվել է նվիրատուին փոխադարձ համաձայնությամբ, ապա նման համաձայնությունը անհրաժեշտ է դիտարկել որպես նվիրատվության նոր պայմանագիր[1]:

Համամիտ ենք պրոֆեսոր Մ.Գ.Մասևիչի կարծիքին, ուստի նպատակահարմար ենք համարում ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 6-րդ կետում վերջին նախադասությունից հետո կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ. «Նվիրառուի կողմից երրորդ անձի սեփականությանը հանձնված գույքը հետ չի կարող վերցվել»:

Մ.Գ.Մասևիչի արտահայտած վերոհիշյալ կարծիքը արդարացված է, սակայն այս առումով հարկ է նշել, որ ԼՂՀ գործող քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխում նվիրատվությունը կարգավորող նորմերով հստակեցված չէ, թե նվիրատվության վերացման դեպքում նվիրառուի կողմից նվիրված գույքից ստացած պտուղները, եկամուտները մնո՞ւմ են նվիրառուի մոտ, թե՞ ոչ, և եթե մնում են կամ չեն մնում, ապա ո՞ր պահից է ստացված պտուղները, եկամուտները վերադարձվում նվիրատուին: Մեր կարծիքով, իրավացի կլիներ ԼՂՀ քաղաքացիական օ-

[1] Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации, часть второй (постатейный) / Отв. ред. О. Н. Садиков. 2003. С. 191.

րենսգրքի 601-րդ հոդվածի 6-րդ կետում «պահին» բառից հետո կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ. «Նվիրատվության վերացման դեպքում վերադարձման ենթակա են նաև գույքից ստացված եկամուտները (ապրանքներ, պտուղներ, հասույթ)՝ սկսած նվիրատուի կողմից նվիրատվությունը վերացնելու պահանջ ներկայացնելու պահից»:

«Նվիրատվությունը վերացնելը» արտահայտությունն ավելի ընդարձակ և ծավալուն է, քան «նվիրված գույքը վերադարձնելը», քանի որ նվերը ինքնին կարող է հանձնվել գույքային իրավունքի (պահանջի) կամ գույքային պարտավորություններից ազատելու տեսքով: Սակայն նվիրատվության պայմանագրի համար նախատեսված հիմքերով՝ պահանջը զիջելու, պարտքը փոխանցելու, պարտքը ներելու վերաբերյալ նորմերը արգելում են դրա միակողմանի դադարումը: Այդ իսկ պատճառով ավելի ճիշտ կլիներ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի անվանումը շարադրել հետևյալ կերպ. «Նվիրատվությունը վերացնելը գույքը հանձնելու դեպքում»:

ПРЕКРАЩЕНИЕ ДОГОВОРА ДАРЕНИЯ ПО ГРАЖДАНСКОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ НКР

Нарине Саркисян
Старший прокурор отдела по надзору за законностью дознания и предварительного следствия Генеральной прокуратуры НКР, советник юстиции 2-го класса

По общему правилу гражданского законодательства НКР< односторонний отказ от обязательств не допускается, но по договору дарения законом установлено исключение. Даритель вправе отменить дарение если одаряемый совершил покушение на жизнь дарителя, жизнь кого-либо из членов его семьи или близких родственников либо умышленно причинил дарителю телесные повреждения, если даритель пережил одаряемого, при условии, что такое основание отмены дарения было предусмотрено договором, если обращение одаряемого с подаренной вещью, представляющей для дарителя большую неимущественную ценность, создает угрозу ее безвозвратной утраты.

В случае отмены дарения одаряемый обязан возвратить подаренную вещь, если она к моменту отмены сохранилась в натуре. вред, причиненный жизни, здоровью или имуществу одаряемого гражданина вследствие недостатков подаренной вещи, подлежит возмещению дарителем, если доказано, что эти недостатки возникли до передачи вещи одаряемому, не относятся к числу явных, и даритель, хотя и знал о них, не предупредил о них одаряемого.

TERMINATION OF THE DONATION CONTRACT BY THE NKR CIVIL CODE

Narine Sargsyan
Senior Prosecutor of Supervision Department of Inquest and Preliminary Investigation of General Prosecutor`s office of NKR, 2nd class Advisor of Justice

According to the general rule provided for by the NKR Civil Code unilaterally refusing to perform an obligation is not acceptable, but in the case of the donation contract the law has allowed an exception. The donor shall have the right to cancel the donation if the donee has inflicted harms to the life of one of donor's family members or close relatives, if the donee has deliberately caused bodily injury to the donor, if the donor outlives the donee (provided that the parties have envisaged it when concluding the donation contract), if the donee's attitude towards the received property (which is of great intangible value to the donor) causes concern of its irreversible loss.

In case of terminating the donation the donee is obliged to return the donor's property if it has been materially preserved at the time of donation termination. Any threat to the life, health or the property of the donor caused by shortcomings of the donated property will be compensated if proven that such shortcomings were created prior to the donation, were not previously known and the donor having known about it did not warn the donee.

Բանալի բառեր – *նվիրված գույք, նվիրատու, նվիրառու, նվիրատվություն, պայմանագիր, պարտականություն, թերություն:*
Ключевые слова: *даритель, дарение, договор, обязанность, одаряемый, подаренной вещь, недостатк.*
Key words: *received property, donator, donee, donation, contract , duty, shortcoming.*